

ԿԱՐՄԻՔ

Սվետլանա Մարգարի Բաղդասարյանի «Ձինվորական անձնակազմի մարտական ակտիվությունը պայմանավորող հոգեբանական գործոնները»ատենախոսության վերաբերյալ

Ժամանակակից պատերազմներում կիրառվող նոր տեխնոլոգիական միջոցները, այդ թվում՝ արհեստական բանականությունը, թեև փոխել են պատերազմի բնույթը, սակայն հաղթանակի ձեռքբերման գործում մարդկային գործոնը շարունակում է ունենալ վճռորոշ նշանակություն: Անշուշտ զինձառայողների մասնագիտական գործունեության արդյունավետությունը պայմանավորված է նաև հոգեբանական գործոններով: Ուստի զինվորական անձնակազմի մարտական ակտիվությունը պայմանավորող հոգեբանական գործոնների հաշվառմամբ իրականացվող կառավարումը նպաստելու է զինվորական գործունեության արդյունավետության և մարտական ակտիվության մեծացմանը: Հետևաբար ողջունելի է Հայաստանում նման արժեքավոր հետազոտություններ իրականացնելը, քանի որ դրանց ներբերումը պաշտպանական համակարգ հնարավորություն կտա արդյունավետ կերպով օգտագործելու մարդկային ներուժը, ինչը կարևոր է սակավաթիվ մարդկային ռեսուրսներ ունեցող պետության համար:

Ինչպես հայտնի է, զինձառայողները մասնագիտական գործունեությունը իրականացնում են անմիջական կյանքին սպառնացող պայմաններում: Ուստի կարևոր է, թե զինձառայողները ինչպիսի պատրաստություն են անցել, որքանով են հաշվի առել ժամանակակից պատերազմներում հակառակորդի կիրառած ինչպես հոգեբանական, այնպես էլ մարտական բնույթի հոգեխոցիչ ներգործության միջոցները: Արդյոք մարտական այդ պատրաստությունը հնարավորություն է տալիս նրանց լարված պայմաններում մոբիլիզացնելու ֆիզիկական, մտավոր և հոգեկան ռեսուրսները և իրավիճակին համապատասխան ցուցաբերելու կառավարելի ակտիվ վարք: Ատենախոսին հաջողվել է ընտրած արդիական թեման

ուսումնասիրել համակողմանիորեն և բացահայտել այն օրինաչափությունները, որոնք նպաստում են զինձառայողների մարտական ակտիվության մեծացմանը:

Ատենախոսք, ուսումնասիրելով զինվորական անձնակազմի մարտական ակտիվության աստիճանը պայմանավորող հոգեբանական գործոնները, վերլուծել է բավական հարուստ մասնագիտական գրականություն ապահովել է հիմնախնդրի վերաբերյալ մշակվածության բարձր աստիճան և ձևավորել ուսումնասիրվող թեմայի համար պատշաճ տեսական հիմքեր: Նշենք նաև, որ նման գիտական գրականության վերլուծությունը ատենախոսին հնարավորություն է տվել պարզելու ոչ միայն զինձառայողի մարտական ակտիվության մղող հոգեբանական գործոնները, այլև ճշգրտելու ուսումնասիրված թեմաների շրջանակներում այն հիմնախնդիրները, որոնք դեռևս չեն գտել իրենց լուծումները:

Ատենախոսի համար տեսական և մեթոդաբանական հիմք էին կազմել հիմնարար գիտական դրույթները, որոնք մշակված են հոգեբանության, հատկապես ռազմական հոգեբանության ոլորտում, ինչպես նաև ներկայացրել տեսական և հայեցակարգային մոտեցումները՝ մարտական իրադրությունում զինձառայողների մարտական ակտիվության աստիճանը պայմանավորող գործոնների վերաբերյալ:

Վերլուծելով զինվորական անձնակազմին մարտական ակտիվության մղող հոգեբանական գործոնների հիմնախնդիրը՝ հոգեբանական գիտական գրականության մեջ դիտարկվել են արժեքավոր վերլուծություններ «Ձինվորականի գործունեության հոգեբանական առանձնահատկությունների» վերաբերյալ, մասնավորապես՝ անդրադարձ է կատարվել զինվորականի գործունեության տեսակներին, գործունեության յուրաքանչյուր փուլում հուզական ծանրաբեռնվածությունների ինտենսիվությանը, մարտական և հոգեբանական պատրաստման տեսակներին և թեմայի բովանդակությանը համարժեք այլ ուսումնասիրությունների: Կարծում ենք՝ արժեքավոր են նաև

վերլուծությունները «մարտական ակտիվություն», «մարտունակություն» եզրույթների կիրառության առանձնահատկությունների վերաբերյալ: Ջինվորական անձնակազմի մարտական ակտիվությունը պայմանավորող հոգեբանական գործոնների ուսումնասիրություններում ներկայացվում են տարբեր գիտական մոտեցումներ արտակարգ իրավիճակներում անձին ակտիվության մղող հոգեբանական գործոնների վերաբերյալ: Իսկ «Ջինվորական անձնակազմի հոգեբանական կայունությանն ուղղված ժամանակակից մոտեցումները» ենթազվիում վերլուծվում են այդ ոլորտում առաջատար պետությունների ՋՈՒ-երում մարտական պատրաստմանն, այդ թվում՝ հոգեբանական պատրաստմանն ուղղված ժամանակակից օրինակելի ծրագրերը: Ընդհանուր առմամբ ներկայացվող տեսական ուսումնասիրությունները հնարավորություն են տվել ատենախոսին ճշգրտորեն մշակելու հետազոտությունների կազմակերպման մեթոդաբանությունն ու մեթոդները: Նշենք նաև, որ ընդհանուր առմամբ ատենախոսին հաջողվել է ներկայացնել հետազոտության իրականացման տրամաբանությունը, ռազմավարությունը, մեթոդները ու ներգրավված ընտրակազմը: Մանրամասնորեն ներկայացված են փորձարարական հետազոտության համար ընտրված և կիրառված քանակական և որակական վերլուծության, մաթեմատիկական վիճակագրության մեթոդներով, ինչպես նաև թեստավորման շրջանակում օգտագործված մեթոդիկաներով ստացված արդյունքներ: Ընդ որում ըստ հետազոտության արդյունքների բացահայտվել են հոգեբանական գործոնների համահարաբերակցային կապերը (ինչպես 2020 թ. Արցախյան 44-օրյա պատերազմին մասնակից զինձառայողների նյարդահոգեկան կայունության, ռիսկի գնալու պատրաստակամության և ագրեսիվության միջև, այնպես էլ 2020 թ. Արցախյան 44-օրյա պատերազմին մասնակցություն չունեցած զինձառայողների հուզական ինտելեկտի, ագրեսիվության, տագնապայնության, նյարդահոգեկան կայունության և ռիսկի գնալու պատրաստակամության միջև և այլն): Նշենք նաև ստացված արդյունքները հնարավորություն է տվել կատարել

արժեքավոր եզրահանգումներ ու առաջարկություններ ուսումնասիրվող թեմայի վերաբերյալ:

Ատենախոսությունը գերծ չէ նաև որոշակի բացթողումներից: Մասնավորապես, անհրաժեշտ ենք համարում ընդգծել հետևյալ նկատառումները.

- Ատենախոսը իրավացի է, երբ նշում է, որ մարտական ակտիվությունը պայմանավորող գործոնների ազդեցության աստիճանը կապված է կոնկրետ մարտական իրադրությունից, տվյալ իրավիճակում հայտնված մարտիկների հոգեվիճակից և այլ փոփոխական պարամետրներից: Ինչպես հայտնի է, մարտական գործողություններն ենթադրում են նաև հակամարտող կողմերից մեկի ինտեսիվ հրետակոծություն, որի ժամանակ հակամարտող մյուս կողմը ստիպված է լինում երբեմն թաքնվել թաքստոցներում: Ընդ որում, թաքստոցներում սպասելով մեծանում է տվյալ անձնակազմի շրջանում տազնապայնության մակարդակի բարձրացման հավանականությունը: Որքան ինտեսիվ և երկարատև են այդ հրետակոծությունները այնքան ավելի մեծ է հավանականությունը, որ տվյալ անձնակազմը կարող է ենթարկվել հոգեխոցիչ ներգործության, ինչը կարող է ազդել նրանց հետագա ակտիվ մարտական գործողությունների վրա: Կարծում ենք՝ ատենախոսությունը կշահեր, եթե հաշվի առնվեին նաև այս իրավիճակները:
- Նշվում է, որ ելնելով հետազոտության նպատակից և խնդիրներից՝ կիրառվել են փորձագիտական գնահատականների, կոնտենտ վերլուծության, հոգեբանական թեստավորման, զրույցի մեթոդները: Անշուշտ հետազոտության համար ընտրված մեթոդները հնավորություն են տալիս առաջադրված նպատակից ելնելով լուծելու առաջադրված խնդիրները: Սակայն ատենախոսը ոչ բոլոր մեթոդների ընտրության և կիրառության հիմնավորումներն է ներկայացրել, բավարարվել է միայն որոշ մեթոդների և մեթոդիկաների կիրառման ընթացակարգերի վերաբերյալ տեղեկությունների նկարագրությամբ (տես. «Հետազոտության ուղղվածության հիմնավորում. հետազոտության մեթոդների համակազմը, ընտրանքը» ենթաբաժինը):

- Ինչպես նշված է ատենախոսության մեջ, «Ռիսկի դիմելու պատրաստակամության հարցարան (PSK) (Շուբերտ) (ռուսերեն)», «Սթրեսակայունության ինքնագնահատման (Ն. Վ. Կիրիշևա, Ն. Վ. Ռյաբչիկովա) (ռուսերեն)» հոգեբանական թեստերը կիրառել է ռուսերեն տարբերակով: Արդյոք դա լրացուցիչ դժվարություններ չի ստեղծել հետազոտվողների համար, ինչը կարող էր ազդել նաև ստացված արդյունքների վրա: Առավել ևս, եթե հաշվի առնենք որ թեստերում ներառված հարցերի քանակը շատ չէ և դրանց հայերեն թարգմանությունը մեծ ծավալ չէր կազմելու:
- Կարծում ենք՝ աշխատանքը կշահեր, եթե ատենախոսը դիտարկեր նաև զինձառայողների շրջանում հակառակորդի նկատմամբ ձևավորված ատելության՝ որպես մարտական ակտիվությունը պայմանավորող հոգեբանական գործոնի նշանակությունը:

Վերը նշված բացթողումները, սակայն, չեն նվազեցնում ատենախոսության գիտական արժեքը: Սվետլանա Բադդասարյանի «Զինվորական անձնակազմի մարտական ակտիվությունը պայմանավորող հոգեբանական գործոնները» թեմայով ատենախոսությունը լիովին համապատասխանում է հոգեբանական գիտությունների թեկնածուի աստիճան հայցելու համար ատենախոսություններին առաջադրվող պահանջներին, իսկ հեղինակը արժանի է ԺԹ 00.01 «Ընդհանուր հոգեբանություն, հոգեբանության տեսություն և պատմություն, անձի հոգեբանություն» մասնագիտությամբ հոգեբանական գիտությունների թեկնածուի գիտական աստիճանի հայցմանը:

Պաշտոնական ընդդիմախոս
Խաչատուր Աբովյանի անվան ՀՊՄՀ-ի

Կիրառական հոգեբանության ամբիոնի դոցենտ,

հոգեբանական գիտությունների թեկնածու

Զ. Դ. Ասատրյանի ստորագրությունը

հաստատում է գիտաբարձրագր, մանկավարժական

գիտությունների թեկնածու, դոցենտ



Handwritten signature of Z. D. Asatryan

Զ. Դ. Ասատրյան

Handwritten signature of U. U. Tsatsiryan

Մ. Մ. Բապիրյան

04.01.2024թ